տեսի որ Գլխադիր Սուրբ Յակոբն փուռ գոհար ե-
ղեալ էր։

Զչիս (12 Դեկտ.) սուպաշին մարդ որոնէր ի սահ-
մանացն, և երէցունք ևս և զէսիլի թոռն գտեալ և
նա փախեալ ի ձեռաց նոցա, հասեալ ի վերայ նորա
կրկին ըմբռնեն և տանին գանեն բազումս։

Շաբաթ (13 Դեկտ.). երեկոյիս կաթողիկոսն դաս։

Եւ առաւօտուս Կիրակի (14 Դեկտ.) Սամուէլն տա-
բաւ զՏէրտէրն ի տուն իւր կնքտուք որդոյ նորին. և
երեկոյիս ձիւն եկն սակաւ։ Եւ Կիրակիս սուպաշին[1])
եկն թէֆթիշ անել ի մէչիտն յայն՝ վասն սատակեալ
մարդոյն. այսր և անդր անկեալ, բան պատճառելով
ԵՌ ըստակ ճուրուշ կարեալ։

Եւ Բշի (15 Դեկտ.) ցերեկիս եւ օրս ի Մահմուտ
փաշի ճամոյ մէջն զմի մարդ սպանեցին։

Գշիս (16 Դեկտ.) այլ ձիւն գայր։ Երեկոյիս վէ-
զիրն ի զօլ ելեալ բազում հացածախս գանեալ և Գ
սարուճա կախեալ յանուանի տեղիսն։

Եշի օրս (18 Դեկտ.) թուղթ ուղարկեաց կաթողի-
կոսն յեկեղեցիսն ամենայն եթէ Դայցէ՛ք զի դատաս-
տան կայ հոգևոր։

Եւ առաւօտուս Ուրբաթ (19 Դեկտ.) եկեալ յամե-
նայն եկեղեցեաց քահանայք և իշխանք ամենայն ևս
յՈւսկիւտարու, և լրցաւ եկեղեցին Աստուածածնի։
Եւ եկն կաթողիկոսն և Նստաւ յատեանն և ընդ նմա
Խաչատուր վարդապետն և Մարտիրոս վարդապետն և
եպիսկոպոսունք Թադէոսն[2]) և Խաչատուրն, և ընդ
սոսա նստեալ Ըռուհիճանն և տեղացիք ևս յաջմէ և
յահեկէ պար առեալ նստան և ժողովուրդք ևս ծե-
ռոց և տղայոց, աղքատաց և ռամկաց շուրջ զժողո-

2) Շուպշն. 3) Թաթէոսն.